ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2018 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք.Ժնև

2018 թվականի ապրիլի 26-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն (11670 ձայնի իրավունքով), ի դեմս «Ա» կարգի մենեջեր Վարտան Սիրմակեսի և «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն (2918 ձայնի իրավունքով), ի դեմս լիազորված անձ Վարտան Սիրմակեսի, որը գործում է 25.04.2016թ. տրված լիազորագրի համաձայն:

Նիստին մասնակցում էր նաև Արդեն Սելլեֆյանը:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 14588) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2017 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

Երկրորդ հարցով
(զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2017 թվականի ֆինանսական տարվա տարվա 3,668,130,000 (երեք միլիարդ վեց հարյուր վաթսունութ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 6,000,000,000 (վեց միլիարդ) ՀՀ դրամ, իսկ մնացած 668,130,000 (վեց հարյուր վաթսունութ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. ապրիլի 27-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 26.04. 2018թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ.Սիրմակես

Քարտուղար՝/ստորագրություն/ Ա.Սելլեֆյան

Քաղվածքն արված է 10.05.2018թ.-ին՝ «ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովի 26.04.2018թ. թիվ 01-2018 արձանագրության բնօրինակից:

Գործադիր տնօրեն՝ Գևորգ Մաչանյան